ՑՈԼԱԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

2 Եվրոպայի միավորման գործընթացի սկիզբը

Եվրոպան 20-րդ դար թևակոխեց իր հզորության ու հարստության բարձրակետում: 1900 թվականին հինգ մեծ եվրոպական տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանն ու Ավստրո-Հունգարիան միասին վերցրած գերազանցում էին ԱՄՆ-ին 1,5-ից 2 անգամ թե տարածքի ու բնակչության, թե այն ժամանակվա տնտեսական հզորության հիմնական ցուցանիշների՝ պողպատի ծուլման /489,9մլն տոննա - 218 մլն տոննա/ ու քարածխի համարժեքությամբ էլեկտրականության սպառման /359,9 մլն տոննա - 284 մլն տոննա/ առումով[1]:

Այդ ժամանակահատվածում Եվրոպայի ռազմական գերակշռությունը չափազանց մեծ էր. հինգ պետությունների զինված ուժերում խաղաղ պայմաններում ծառայում էր 3,4 մլն մարդ /ընդ որում պատերազմական դրության ժամանակ այդ թիվը կարող էր հասնել մինչև 20 մլն մարդու/, մինչդեռ ԱՄՆ-ի զինված ուժերում ծառայում էր ընդամենը 96 հազար մարդ: Անհամեմատելի էր նաև ռազմական նավատորմի ու ռազմական տեխնիկայի թվաքանակի հարաբերակցությունը[2]:

Մոլորակի մյուս քաղաքակրթական կենտրոնների դերը ուժերի հարաբերակցության տեսանկյունից այդ ժամանակ առհասարակ հաշվի չէր առնվում: Ասիական երկրները /բացառությամբ Ճապոնիայի/, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրները կամ եվրոպական գաղութային մետրոպոլիաների մաս էին հանդիսանում, կամ բաժանված էին ազդեցության գոտիների /Չինաստանը, Օսմանյան կայսրությունը, Պարսկաստանը/: Այդ երկրների հոգևոր ներուժը թվում էր սպառել է իրեն, իսկ հսկայական տարածությունը, ժողովուրդներն ու բնական պաշարները ծառայում էին սոսկ իբրև Եվրոպայի հարստության աղբյուր:

Տնտեսական հաջողությունների և ռազմական հզորության հետ մեկտեղ 20-րդ դարի սկզբին Եվրոպան համաշխարհային առաջատար էր հանդիսանում նաև այնպիսի կարևորագույն քաղաքակրթական չափանիշների տեսանկյունից, ինչպիսիք են մարդու իրավունքները, կյանքի որակը, գիտության զարգացումը, կրթության մակարդակը և մշակութային ազդեցությունը: Մեծագույն եվրոպացի

---

[1] Kennedy P., The Rise and Fall of the Great Powers, London, 1998

[2] Նույն տեղում:

գիտնականներ էյնշտեյնն ու Հեյզենբերգը, Կյուրին ու Ռեզերֆորդը, Պլանկը և Բորը, Ցիոլկովսկին ու այլոք միջուկային ֆիզիկայի, քվանտային մեխանիկայի և այլ ոլորտներում աննախադեպ հաջողությունների համար: Նույնը կարելի է ասել նաև գրականության, գեղանկարչության, արվեստի, պոեզիայի բնագավառներում Դանթեի ու Սերվանտեսի, Շեքսպիրի ու Ռեմբրանդտի, Բեթհովենի ու Պիկասոյի, Մոցարտի ու Դալիի, ինչպես նաև շատ այլոց նվաճումների ու կերտած գլուխգործոցների մասին: Վերոնշյալը ապացուցում է այն դրույթը, որ այդ դարաշրջանի եվրոպական քաղաքակրթության արժեքային համակարգը մյուս բոլոր մայրցամաքների առաջադեմ հասարակայնության կողմից ընկալվում էր իբրև դեպի ապագան միտված միակ «բանալին»: Երկու ունիվերսալ գաղափարախոսական համակարգերը՝ լիբերալիզմն ու սոցիալիզմը նույնպես «ծնվել են» եվրոպական հողի վրա և նվաճել մարդկանց ուղեղները ողջ աշխարհում: Քրիստոնեության տարբեր ճյուղերը՝ կաթոլիկությունը, բողոքականությունը և ուղղափառությունը մյուս մայրցամաքներ են ներթափանցել Եվրոպայից ակտիվ քարոզչական գործունեության ու եվրոպական մետրոպոլիաների ռազմական ու վարչական կառույցների գործուն օժանդակության շնորհիվ:

Բայց իրավիճակը կտրուկ փոխվեց 1914 թվականից հետո: Սեփական մայրցամաքում առավելության հասնելու եվրոպական տերությունների ձգտումը սուր մրցակցության ծավալման տեղիք տվեց: Գաղութների վերաբաժանման համար սկսված պայքարը, դասակարգերի, գաղափարախոսությունների, հասարակական համակարգերի բախումները, որոնք իրենց հերթին երկու համաշխարհային պատերազմների ու մի շարք հեղափոխությունների հանգեցրին, եվրոպական քաղաքակրթության համաշխարհային գերիշխանությանը ջախջախիչ հարված հասցրեցին: Ամայացած ու ավերված, անդրծովյան գաղութները կորցրած Եվրոպան երկարատև ճգնաժամի մեջ ընկավ:

Ավելին, Եվրոպան անցյալի պես այլևս չէր կարող հույս դնել իր բնական առավելությունների վրա: Թեև 20-րդ դարի սկզբին եվրոպական գյուղատնտեսությունը առանց դժվարության մայրցամաքն ապահովում էր անհրաժեշտ գյուղատնտեսական արտադրանքով, ինչպես նաև հանդիսանում էր համաշխարհային շուկաներ գյուղատնտեսական արտադրանքի խոշոր արտահանող, այն այլևս այդ բնագավառում չէր կարող հավասարվել ԱՄՆ-ի, մասամբ նաև Կանադայի, Ավստրալիայի ու Արգենտինայի հետ: Քարածխի ու պողպատի պահանջարկը նույնպես խիստ նվազել էր՝ ռեսուրսախնայող ու գիտատար տեխնոլոգիաների ներդրման պատճառով: Շահավետության տեսանկյունից առավելություն տրվեց էներգիայի արտադրության այլընտրանքային աղբյուրների ու հումքի տեսակների կիրառմանը, որոնք հասու չէին եվրոպական երկրների մեծ մասի համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված առևտրի ու ֆինանսների, գիտության ու տեխնիկայի համաշխարհայնացման գործընթացը եվրոպացիներին դուրս մղեց իրենց վաղեմի առաջատար դիրքերից:

Եվրոպայում իրավիճակը վտանգավոր էր նաև դեմոգրաֆիկ առումով: Ցածր ծնելիությունը կարող էր հանգեցնել մայրցամաքի բնակչության կտրուկ կրճատմանը: 20-րդ դարի երկրորդ կեսին բնակչության ամենամյա աճը Աֆրիկայում կազմել է 3%, Լատինական Ամերիկայում՝ 2,5%, Ասիայում՝ 2%, իսկ Եվրոպայում ընդամենը 0.3%, այն էլ մեծամասամբ ներգաղթի շնորհիվ[3]: Դրան հակառակ, ամբողջ աշխարհում գնալով աճում էր ԱՄՆ-ի դերակատարումը տարբեր բնագավառներում: Թեև Միացյալ Նահանգներում բնակվում է երկրագնդի բնակչության 4,5%-ը, այդ երկիրը ներկայում արտադրում է համաշխարհային համախառն ազգային արդյունքի 1/4-ը: Համաշխարհային առևտրի կեսն իրականացվում է դոլարի միջոցով: Աշխարհի խոշորագույն 500 ընկերություններից 153-ը ամերիկյան են՝ տարեկան 158 մլրդ ԱՄՆ դոլար եկամուտով[4]: Այդ ընկերություններին են պատկանում անդրազգային բազմաթիվ կորպորացիաներ, որոնց համար ազգային պետությունների սահմանները խոչընդոտ չեն հանդիսանում: Ինտերնետային ցանցի միջոցով ԱՄՆ-ը գերիշխող դիրքեր ունի համաշխարհային տեղեկատվական շուկայում, որը, փաստորեն, հանդիսանում է 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի գիտատեխնիկական հեղափոխության ու առաջընթացի շարժիչ ուժը:

Խորհրդային Միության փլուզումից հետո պաշտպանության բնագավառում զրկվելով միակ արժանի հակառակորդից, ԱՄՆ-ը, զինված ուժերի գնահատման ժամանակակից հիմնական չափանիշներից ելնելով, ունի աշխարհում ամենահզոր ու մարտունակ բանակը, ներառյալ հրթիռա-միջուկային ներուժը, նավատորմն ու ավիացիան: ԱՄՆ ռազմական բյուջեն, չնայած «սառը պատերազմի» ավարտից հետո մասնակի կրճատմանը, 40%-ով գերազանցում է բոլոր եվրոպական պետությունների հանրագումարային ռազմական ծախսերը[5]: «Քիչ հավանական է, որ ԱՄՆ-ի՝ առաջին համաշխարհային գերտերության կարգավիճակը վիճարկվի որևէ առանձին մրցակից-պետության կողմից ավելի քան մեկ սերնդի կյանքի տևողության ընթացքում: Ոչ մի պետություն չի կարող հավասարվել ԱՄՆ-ի հետ՝ նկատի ունենալով հզորության չորս հիմնական չափանիշները՝ ռազմականը, տնտեսականը, տեխնոլոգիականը և մշակութայինը, որոնք ԱՄՆ-ին հաղորդում են համաշխարհային քաղաքական ձևաչափ: Եթե Ամերիկան ինքը չհրաժարվի իր առաջնորդի դերակատարումից, ապա դրա միակ երկընտրանքը լինելու է միջազգային քաոսը»,- պնդում է ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ. Քարտերի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Զ. Բժեզինսկին[6]:

---

[1] "Европа вчера, сегодня, завтра", под ред. Н. П. Шмелева, М., 2002, с. 20.
[4] Նույն տեղում, էջ 21:
[5] International Herald Tribune, 1999, 4 January.
[6] Brzezinski Z., "A Geostrategy for Eurasia", Foreign Affairs, September-October, 1997, p. 51

Ժամանակակից աշխարհում ԱՄՆ-ի ակտիվ դերակատարման գործոնների թվում Զ. Բժեզինսկին պատահաբար չի նշել մշակութային գործոնի դերը: Առաջին և հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո Միացյալ Նահանգներ են ներգաղթել մեծ թվով եվրոպական մտավորական ընտրախավի փայլուն ներկայացուցիչներ: Այդ հանգամանքը մեծապես նպաստել է ամերիկյան գիտության ու մշակույթի վերելքին՝ խթանելով երկրի տնտեսական բարգավաճումը, ամրապնդելով նրա ռազմական ներուժը: Անգլերեն լեզվի ամերիկյան դիալեկտը դարձել է միջազգային շփումների հիմնական գործիք, որի հիմնական բազային հասկացությունները և տերմինաբանությունը ներդրվել են այլ լեզուների գործնական, գիտատեխնիկական ու կենցաղային բառապաշարի մեջ:

Բոլոր այդ փաստերը հիմք հանդիսացան այն հիմնադրույթի ձևավորման համար, համաձայն որի 20-րդ դարը, որը սկսվեց իբրև «եվրոպական», ավարտվում է որպես «ամերիկյան»: Ժողովրդավարական արժեքների վրա հիմնված շուկայական տնտեսության օրինակը մատուցվում է իբրև երկընտրանք չունեցող մոդել մյուս բոլոր համաշխարհային քաղաքակրթական կենտրոնների համար: 18-19-րդ դարերի երկբևեռ միջազգային հարաբերությունների համակարգին 20-րդ դարում փոխարինելու է գալիս միաբևեռ աշխարհակարգը, որի կենտրոնը գտնվում է Վաշինգտոնում:

Այդ դրույթն իր արտացոլումն է գտել մասնավորապես ճապոնական ծագումով ամերիկացի գիտնական Ֆրենսիս Ֆուկույամայի «Պատմության ավարտը և վերջին մարդը» գրքում, որը լույս տեսավ Եվրոպայի արևելքում կոմունիստական վարչակարգերի տապալումից հետո[7]: Այդ հիմնադրույթը նկատի է առնում հակադիր համաշխարհային ուժի կենտրոնների առճակատման ավարտը, որոնցից յուրաքանչյուրն իր պատասխանն էր առաջարկում մարդկության առջև մինչ օրս ծառացած հիմնախնդիրների լուծման առումով: Ուժի կենտրոններից մեկի անհետացման արդյունքում մարդկությունն ինքնըստինքյան վերջնական պատասխան է ստանում պատմական այն հիմնախնդիրների լուծման կապակցությամբ, որն այսուհետ կորցնում է իր իմաստն ու արդիականությունը: Եթե «պատմության ավարտը» բանաձևի նախահոր՝ Հեգելի համար այն կապված էր պրուսական միապետության հետ՝ իբրև համաշխարհային ոգու մարմնացում, իսկ Մարքսի համար՝ անցում դեպի սոցիալիզմ, որը վերջինս համարում էր մարդկության նախապատմության ավարտը շնորհիվ «մարդկանց ղեկավարումից իրերի ղեկավարմանն անցնելը», ապա Ֆուկույամայի համար «պատմության ավարտը» նշանավորվում է ժամանակակից ամերիկյան հասարակության գոյությամբ:

20-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայի տնտեսության վերելքին, Արևմուտքի ու Արևելքի միջև լարվածության թուլացմանը զուգահեռ, որն ի դեպ թելադրվում

---

[7] Fukuyama F., "The End of History and the Last Man". Hamish Hamilton, 1992.

էր միջուկային «փոխադարձ ոչնչացման» վախի հրամայականից, «եվրոպեսիմիզմն» իր տեղը զիջեց «եվրոօպտիմիզմին»: Դրա նյութական հենքն էին կազմում եվրոպական ինտեգրման գործընթացները: Դրանց մեկնակետը «Շումանի ծրագիրն էր» /Ֆրանսիայի, Գերմանիայի դաշնային հանրապետության, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի քարածխի արդյունահանման ու սև մետաղագործության միաձուլման ծրագիրը/, որը 1950թ. մայիսի 9-ին հռչակվեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի կողմից[8]: Սրա հիման վրա 1951թ. ստեղծվեց Քարածխի ու պողպատի եվրոպական միությունը: Այդպիսով, Շումանի խոսքերով, «Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև պատերազմները, որոնք բազմիցս ամայացրել էին Եվրոպան, դառնում էին ոչ միայն անիմաստ, այլև նյութապես անհնարին»[9]:

«Շումանի ծրագրի» նախաձեռնողը Ժան Մոնեն էր: Հենց նա էլ մշակեց արևմտաեվրոպական ինտեգրման այն սկզբունքները, որոնք հետագայում մեծապես նպաստեցին գործընթացների հնարավորինս սահուն ու հաջող իրականացմանը[10].

- տնտեսական ինտեգրումը պետք է նախորդեր քաղաքական ինտեգրմանը.
- հաջող ինտեգրման նախապայման էր հանդիսանում վերազգային սկզբունքը, որը նախատեսում էր ազգային պետությունների կողմից իրենց ինքնիշխանության մասնակի փոխանցումը վերազգային ինստիտուտներին,
- ինտեգրման գործընթացի ընթացքում առաջնահերթ կերպով պետք է լուծվեին այն պարզ խնդիրները, որոնք անհամաձայնությունների տեղիք չէին տալիս: Դրա հիման վրա պետք է ստեղծվեին նախադրյալներ առավել բարդ հիմնահարցերի լուծման համար, խնդիրներ, որոնց վերաբերյալ ի սկզբանե գոյություն ունեին անհաղթահարելի տարակարծություններ:

Տնտեսական ինտեգրման նպատակները ներառում էին տնտեսական գործունեության բոլոր ձևերի ներդաշնակ զարգացումը, անընդհատ ու հավասարաչափ աճը, կայունության ապահովումն ու կենսամակարդակի արագ բարձրացումը:

Ինտեգրման գործընթացների հիմքում ընկած էր խոշոր տնտեսական տարածությունների ստեղծման օբյեկտիվ անհրաժեշտությունը, որը դուրս էր գալիս համեմատաբար ոչ մեծ եվրոպական պետությունների ազգային սահմանների շրջանակներից: Ինտեգրման ակտիվացմանը նպաստեցին նաև մի շարք աշխարհաքաղաքական գործոններ. մեկնարկելով «սառը պատերազմի» կիզակետում, արևմտաեվրոպական ինտեգրումը կոչված էր ամրապնդելու

---

[8] http://europe.eu.int/abc/index-en.htm
[9] "Европа вчера, сегодня, завтра", с. 25.
[10] В. Г. Шемятенков, "Европейская интеграция", М., 2003, с. 30.

Հյուսիսատլանտյան դաշինքի տնտեսական հենքը: Դրա հետ մեկտեղ երկրորդ աշխարհամարտում հաղթած պետությունները ինտեգրման գործընթացները դիտում էին իբրև պարտված պետությունների նկատմամբ վերահսկողություն սահմանելու միջոց: Ի վերջո, եվրոպական պետությունների համար այդ գործընթացները ծառայում էին իբրև հակակշիռ ոչ միայն ԽՍՀՄ-ի, այլև մասամբ ԱՄՆ-ի գերիշխանության դեմ, որը արևելքից հավանական վտանգի դեպքում հանդես էր գալիս իբրև Արևմտյան Եվրոպայի անվտանգության երաշխավոր: Գաղութային կայսրությունների անկումը նույնպես մեծապես նպաստեց, որպեսզի եվրոպական երկրներն իրենց ուշադրությունը կենտրոնացնեն մայրցամաքի հիմնախնդիրների վրա:

Քարածխի ու պողպատի եվրոպական միության ստեղծմանը հետևեց Հռոմի պայմանագրի[11] հիման վրա 1957թ. եվրոպական տնտեսական միության և Միջուկային էներգիայի գծով եվրոպական միության ստեղծումը, որը 35 տարի անց Մաաստրիխտի[12] ու Ամստերդամի[13] պայմանագրերի ստորագրումից հետո վերածվեց Եվրոպական Միության: Վերջինիս շրջանակներում ձևավորվեցին կուռ ինստիտուցիոնալ կառույցներ՝ եվրոպական խորհուրդը, Նախարարների խորհուրդը, եվրոպական հանձնաժողովը, եվրոպական խորհրդարանը, եվրոպական դատարանը, որոնք նպաստեցին առանց մաքսային սահմանների համընդհանուր շուկայի ստեղծմանը, տարածաշրջանային, գյուղատնտեսական միացյալ քաղաքականության մշակմանը ու ի վերջո միասնական տարադրամի՝ եվրոյի ներմուծմանը: Քայլեր կատարվեցին սոցիալական ապահովության ու հարկային փոխհամաձայնեցված համակարգերի ստեղծման, ընդհանուր արտաքին ու անվտանգության քաղաքականության մշակման և արագ արձագանքման գինված ուժերի ստեղծման ուղղությամբ: Այնուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ քաղաքական միության հիմք համարվող արտաքին քաղաքականությունն ու անվտանգության քաղաքականությունը այն բնագավառներն են, որոնց պարագայում եվրոպական պետությունները ավանդաբար սեփական ինքնիշխանությունը պահպանելու եռանդուն ջատագովներ են հանդիսացել: Շատ հետազոտողներ արձանագրում են, որ այդ ոլորտներում շահերի փոխհամաձայնեցումը դժվարությունների է բախվում, մասնավորապես առաջատար եվրոպական պետությունների տարբեր քաղաքական նկրտումների պատճառով[14]: Դա պայմանավորված է նրանով, որ Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան Եվրամիության այն պետություններն են, որոնք միջուկային զենք ունեն, մինչդեռ մյուս պետությունները կամ չեզոք, կամ էլ որևէ պաշտպանական

---

[11] http://www.historycentral.com/Europe/RomeTreaty.html
[12] http://europe.eu.int/abc/treaties-en.htm; http://maastrichttreaty.com
[13] http://europe.eu.int/comm/economy-finance/emu-history/documents/treaties/amsterdamtreaty.pdf
[14] "Конституции государств Европейского Союза", под ред. Л. А. Окунькова, М., 1997.

միության մեջ չմտնող երկրների կարգավիճակ ունեն[15]: Ինչ վերաբերում է եվրոպական ինտեգրման արտաքին քաղաքական բաղկացուցչին, ապա այն ամենայն հավանականությամբ կգարգանա անդամ-երկրների դիրքորոշումների մերձեցման, համաձայնության հաստատման փնտրտուքի և առաջնային ուղղություններով համատեղ գործողությունների ծեռնարկման ուղղությամբ: Հավանական է նաև, որ ապագայում ԵՄ-ում կձևավորվի արտաքին քաղաքական որոշումների ընդունման արդյունավետ կառուցակարգ:

Եվրամիության շրջանակներում Շենգենյան համաձայնությունների շրջանակներում երաշխավորվեց ազգային սահմանների միջով մարդկանց անարգել տեղաշարժվելու իրավունքը, Եվրոպոլի միջոցով՝ կազմակերպված հանցավորության դեմ համատեղ պայքարը: Ինտեգրման գործընթացի խորացմանը զուգահեռ ընդլայնվեցին նրա շրջանակները. նախապես միության կազմի մեջ մտնող 6 մասնակից պետություններին սկզբում միացել են Մեծ Բրիտանիան, Իռլանդիան, Դանիան, իսկ այնուհետև Իսպանիան, Պորտուգալիան, Հունաստանը, Ֆինլանդիան, Շվեդիան ու Ավստրիան: Ներկայում Եվրամիության մեջ մտնող պետությունների թիվը հասել է 25-ի:

Համաշխարհային քաղաքականության ու տնտեսության մեջ արևմտաեվրոպական ինտեգրումը յուրահատուկ ու բացառիկ երևույթ է: Դրա շնորհիվ Արևմտյան Եվրոպայի ժողովուրդներին հաջողվեց երկու կարևորագույն հիմնախնդիր լուծել: Առաջին հերթին վերացվեցին պետությունների միջև պատերազմների առաջացման տնտեսական հիմքերը: Երկրորդ հերթին, զգալիորեն ընդլայնվեցին ազգային տնտեսությունների սահմանափակ հնարավորությունները և բարենպաստ պայմաններ ստեղծվեցին տնտեսական գործունեության միջազգայնացման համար: Այդ հանգամանքը Արևմտյան Եվրոպայում կայուն խաղաղության ու տնտեսական բարգավաճման երաշխիք հանդիսացավ:

Ինտեգրման գաղափարական նախադրյալները ձևավորվեցին այսպես կոչված «եվրոպական գաղափարի» շրջանակներում. մտավորական հոսանք, որը հանդես էր գալիս Արևմտյան Եվրոպայում պատերազմների բացառման ու մայրցամաքի ժողովուրդների և պետությունների քաղաքական միավորման օգտին: Այդ առումով հիշարժան է 1946թ. սեպտեմբերի 19-ի Ցյուրիխի համալսարանում Ուինստոն Չերչիլի ճառը[16]: Բացի Եվրոպայի միավորման հուզական կոչից ելույթի բովանդակության մեջ մտնում էին այնպիսի գաղափարներ, որոնք հետագայում ինտեգրման գործընթացի անկյունաքարերը հանդիսացան. Եվրոպայի Միացյալ Նահանգների շրջանակներում «եվրոպական ընտանիքի» վերականգնումը, կառույց, որը կերաշխավորեր խաղաղության, անվտանգության և ազատության հաստատումը, ինչպես նաև Գերմանիայի ու Ֆրանսիայի

---

[15] Борхорд К., "Европейский Союз. Прошлое, настоящее, будущее", М , 1996, с. 80.
[16] В. Г. Шемятенков, "Европейская интеграция", с. 28.

հաշտեցումը և գործընկերությունը: Այդպիսի ծրագրերի հեղինակների թվում էին նաև եվրոպական հասարակական ու քաղաքական մտքի առավել ականավոր ներկայացուցիչները:

Ինտեգրման տնտեսական նախադրյալները ձևավորվում էին Արևմտյան Եվրոպայի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքում: Այդ գործընթացի քաղաքակրթական առանձնահատկությունների թվին են պատկանում բանական անհատականությունը, անձնական ազատությունը, իրավունքի գերակայությունը, քաղաքացիական հասարակությունը և քաղաքական ժողովրդավարությունը, մասնավոր սեփականության ամրապնդումը, աշխատանքի արտադրողականության հետևողական բարձրացումը:

Արևելյան Եվրոպայում նույնպես փորձեր էին արվում ստեղծելու արևմտաեվրոպական ինտեգրմանը համարժեք կառույց՝ 1949թ. Խորհրդային Միության նախաձեռնությամբ հիմնադրված Տնտեսական փոխօգնության խորհրդի օրինակով: Սակայն այս նախաձեռնությունը հաջողություն չունեցավ. թեև Խորհրդի մասնակից պետություններում աշխատանքի բաժանման սկզբունքը որոշակի դրական արդյունքների էր հանգեցնում /մշակվում էին միացյալ ցյուղային ծրագրեր, ստեղծվում էին փոխադարձ վճարումների համակարգեր և այլն/, սակայն, ընդհանուր առմամբ, սոցիալիստական ինտեգրումը ընդամենը միջազգային մասշտաբով վերարտադրում էր այն բոլոր թերությունները, որոնք օրգանապես ներհատուկ էին ԽՍՀՄ կենտրոնացված վարչահրամայական տնտեսությանը:

Այդ իմաստով «եվրաօպտիմիզմի» համար վճռորոշ հիմք հանդիսացավ հակադիր հասարակական համակարգերի ու ռազմական բլոկների միջև մայրցամաքի բաժանման հաղթահարումը: Բեռլինյան պատի անկումն ու «երկաթե վարագույրի» անհետացումը, Տնտեսական փոխօգնության խորհրդի ու Վարշավյան պայմանագրի միության ու բուն ԽՍՀՄ գոյության դադարումը, Եվրոպայի արևելքում կոմունիստական վարչակարգերի փլուզումը ավարտեցին միմյանց անհարիր քաղաքակրթական կենտրոնների շուրջ կեսդարյա առճակատումը եվրոպական մայրցամաքում: Առանց բացառության բոլոր եվրոպական երկրների կողմից իրավական պետության, ժողովրդավարության ու շուկայական տնտեսության սկզբունքների որդեգրումը ճանապարհ հարթեց դեպի համաեվրոպական կառույցների ստեղծումը՝ «Ատլանտյան օվկիանոսից մինչև Ուրալ», որի անհրաժեշտության մասին դեռևս 1960-ական թվականների

կեսերից խոսում էր գեներալ Շառլ դը Գոլը[17]:

Այդ ճանապարհի առաջին քայլը կատարվել էր դեռևս երկբևեռ աշխարհակարգի ժամանակաշրջանում՝ 1975թ. Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի կազմակերպմամբ և Հելսինկյան

[17] "Европа вчера, сегодня, завтра", с. 27.

եզրափակիչ ակտի ընդունմամբ[18]: Այդկերպ սահմանվեցին ընդհանուր «խաղի կանոնները» ինչպես եվրոպական երկրների միջև, այնպես էլ ԱՄՆ-ի ու Կանադայի հետ: Հելսինկյան պայմանավորվածությունները հանգեցրին Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության /ԵԱՀԿ/ ստեղծման համար, որը ՌԴ նախկին արտգործնախարար Ս. Իվանովի բնորոշմամբ «այն համաեվրոպական ձևաչափ ունեցող միակ կառույցն է, որն անվտանգության հիմնախնդիրների նկատմամբ կիրառում է ոչ թե մասնակի, այլ համակողմանի ու համակարգային մոտեցում»[19]:

Հաջորդ քայլը նախկին սոցիալիստական երկրների ընդունումն էր 1949թ. ստեղծված Եվրոպայի Խորհրդի կազմի մեջ, որի գլխավոր նպատակներն են բոլոր անդամ պետությունների կողմից Մարդու իրավունքների եվրոպական խարտիային հետևելը, ընտրությունների ժամանակ ժողովրդավարական ընթացակարգերի պահպանման վերահսկողությունը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և այլն: Տնտեսական փոխօգնության խորհրդի ու Վարշավյան պայմանագրի միության գործունեության դադարումը, որը պատճառ հանդիսացավ միության նախկին անդամ պետությունների միջև տնտեսական կապերի կտրուկ կրճատման համար, հանգեցրեց վերջիններիս աճող վերակողմնորոշմանը դեպի Եվրամիություն:

Այդպիսով, ինչպես նախկինում հաճախ է եղել, 20-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպան կրկին ողջ մարդկության համար սկսեց ճանապարհ հարթել դեպի ապագան՝ իր վրա «փորձարկելով» հասարակական, քաղաքական ու տնտեսական մեխանիզմների արդյունավետությունը փոփոխվող համաշխարհային իրողություններին: Այդ ժամանակահատվածում Եվրոպայում մշակվում էր համաշխարհային զարգացման ոչ միատեսակ միտումների միջև այն նուրբ և յուրահատուկ հարաբերակցությունը, ինչպիսիք են համաշխարհայնացումը, միջպետական ինտեգրումը և իրենց ինքնությունը պահպանելու առանձին տարածաշրջանների ձգտումը: Հենց Եվրոպայի պարագայում էր կուտակվում այն անգնահատելի փորձը, որը շարունակում է հարստանալ ու լրացվել՝ կայուն տնտեսական աճի ապահովման, գիտատեխնիկական առաջընթացի խթանման, բնակչության մեծամասնության համար կրթության երաշխավորման, բժշկական ծառայությունների ձեռքբերման մատչելիության ապահովման, սոցիալական պաշտպանվածության միջոցով:

---

[18] http://www.dryerlint.org/pmwiki/pmwiki.php/Eve/HelsinkiFinalAct

[19] Иванов Игорь. Россия в меняющемся мире. Независимая газета. 1999. 25 июня.